



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30179
Ապրիլ 10, 1987

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական խորհուրդի
Եռնիքն Սիթի.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Փետրուար 8, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 1ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Արփենա Սպարպորո
Արթին Գէօրդլեան
Ալիս Եիկիթքուրթ
Ռապրթ Պորկըրսըն
Ռիչըրտ Թէրզեան
Չարլզ Շենլուկեան